Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հուլիսի 19-ի N 985 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻ ՇԱՐՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից առաջադրված կապի և տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների (այսուհետ՝ ցուցանիշներ) հավաքագրման և վարչական վիճակագրական ռեգիստրի վարման կարգը:

2. Վարչական վիճակագրական ռեգիստրը տեղեկություններ է պարունակում Հայաստանի Հանրապետությունում կապի և տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների մասին:

3. Վարչական վիճակագրական ռեգիստրի տեղեկությունները (այսուհետ՝ ռեգիստրի տեղեկություններ) թարմացվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ներկայացված տեղեկությունների, ինչպես նաև

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակած պաշտոնական վիճակագրության հիման վրա:

4. Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ), Կապի տարածաշրջանային համագործակցության և այլ միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա կարող է սահմանված կարգով փոփոխվել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից հաստատված՝ կապի և տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների ձևաչափը:

5. Ռեգիստրի տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար:

6. Ռեգիստրի տեղեկությունները մինչև տվյալ տարվա մարտի 10-ը տեղադրվում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության www.mtc.am կայքում «IT indicator» բաժնում, որը ներառում է նախորդ տարվա ցուցանիշների ամփոփ տվյալները:

7. Ցուցանիշների լրացման և (կամ) փոփոխման դեպքում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին) 10-օրյա ժամկետում կայքում կատարում է համապատասխան փոփոխություններ:

8. Ռեգիստրի տեղեկությունները Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին, Հեռահաղորդակցության միջազգային միությանը, Կապի տարածաշրջանային համագործակցությանը և այլ միջազգային կազմակերպությունների տրամադրվում են անվճար:

9. Լիազոր մարմինը յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 20-ը ամփոփում է համապատասխան մարմինների կողմից ներկայացված և իր դիտարկումների արդյունքում հավաքագրված նախորդ տարվա վերաբերյալ ցուցանիշները:

10. Ամփոփված ցուցանիշները փոփոխվում և (կամ) լրացվում են մինչև տվյալ տարվա մարտի 1-ից մինչև հուլիսի 1-ը՝ համապատասխան մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտարկումների հիման վրա:

II. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Լիազոր մարմինն իրավունք ունի ստանալու վարչական ռեգիստրների վարման համար անհրաժեշտ տվյալներ և տեղեկություններ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 19-ի N 985 -Ն որոշման 3-րդ և 5-րդ կետերում նշված մարմիններից և պետական հիմնարկներից:

12. Լիազոր մարմինը պարտավոր է հրապարակել իրենց կողմից իրականացված վարչական բնույթի դիտարկումների արդյունքները՝ մինչև հաջորդ տարվա մարտի 10-ը:

13. Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինը պարտավոր է ռեգիստրի տեղեկությունների և ցուցանիշների վերաբերյալ դիտարկումները և այլ աշխատանքներ իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև առաջնորդվել «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

III. ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Վարչական վիճակագրական ռեգիստրում տվյալները գրանցվում են գրանցամատյանում կամ էլեկտրոնային եղանակով տվյալների շտեմարանում, որի ձևը հաստատում է լիազոր մարմինը:

15. Փոփոխությունները կատարվում են հետևյալ կարգով՝

1) անհարժեշտության դեպքում փոփոխությունները կատարվում են լիազոր մարմնի կողմից այդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) վիճակագրական դիտարկման արդյունքների հիման վրա.

2) վարչական ռեգիստրում տվյալների փոփոխությունը կատարվում 10-օրյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ